«ԱՅՍ ՄԵԿԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՎ ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ ՉԷ, ՍԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՀՈՐ ԵՎ ՁԱՎԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ...»

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Նոյեմբերի 25-ին, օրվա երկրորդ կեսին, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մամուլի ազգային անկախ ակումբին անդամակցող լրագրողների մի մեծ խմբի:

Վեհարանի հյուրասրահում բարեողջույնի իր հայրական խոսքն ուղղելով նրանց՝ Նորին Սրբությունը ծանոթացավ ակումբի ծրագրերին, նպատակներին, հետագա անելիքներին: Ամենայն Հայոց Հայրապետին հանձնվեց նաև ակումբի օրաթերթի անդրանիկ համարը:

Այդ հանդիպման արձագանքները տեղ գտան հանրապետական մամուլում և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների լայն շրջանակներում: Ցուրաքանչյուր լրագրող իր անձնական մոտեցմամբ էր մանրամասնել այն՝ համաժամանակյա գլխավոր շեշտը դնելով տվյալ հանդիպման կարևորության ու հրատապության վրա:

Առավել մանրամասն տեղեկություններ տալու համար մեր ընթերցողներին, որոշեցինք Վեհափառ Հոր հանդիպումը լրագրողների հետ տպագրել ամբողջությամբ՝ միայն փոքրիկ ենթաբաժիններ առանձնացնելով:

Իր հայրական խրատ-հորդորներն է տալիս Վեհափառ Հայրապետը

Ես ողջունում եմ ձեր այցելությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ուրախ եմ, որ դուք ցանկություն հայտնեցիք այստեղ Ամենայն Հայոց Հայրապետի հետ ունենալ առաջին հանդիպումը: Սա, կխորհիմ, իր տեսակին մեջ առաջինն է, որպես հայ մամուլի ազգային մարմնի այցելություն ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ես ուզում եմ նախ հայտնել, թե այս մեկը սովորական իմաստով մամլո ասուլիս չէ, սա հանդիպում է հոր և զավակների միջև, իրենց տան մեջ, որովհետև Սուրբ Էջմիածինը հոգևոր տունն է անխտիր բոլորին և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ նաև արտասահմանում: Ես ուզում եմ երկու-երեք բառերով նախ հայտնել իմ ըմբռնումը հայ մամուլի մասին: Դուք սպասարկողներն եք հաղորդակցության միջոցների: Ժողովրդի հասարակական կազմավորման պրոցեսում մամուլը և հաղորդակցության այլ միջոցները, ինչպես ձայնասփյուռը կամ հեռուստատեսիլը, ունեն շատ մեծ, որոշադրիչ կարևոր դեր:

Ես մամուլը պատկերացնում էմ որպես երկու հիմնական առաքելություններ ունեցող ծառայություն. առաջինը անվանում եմ հայ կյանքի լուսանկարչություն: Պատկերը ցոլացնել հարազատորեն, իրական, առարկայական պատկերը: Ժողովրդի կյանքը պատկերել այնպես, ինչպես Գրիգոր Զոհրապն է ասել, կյանքը ինչպես որ է: Մամուլը այն հայելին է, որի մեջ

պետք է արտացոլվի մեր կյանքը՝ իր եղածի ամբողջական, հարազատ, առարկայական պատկերացումով:

Մամուլի երկրորդ առաքելությունը ես կոչում եմ նկարչություն, ոչ թե լուսանկարչություն, այլ՝ գեղանկարչություն: Խմբագիրները, հրապարակագիրները, լրագրերի աշխատակիցները ոչ թե ներկայացնում են միայն եղած կյանքը իր տվյալ պատկերի մեջ, այլ նաև իրենց մտածումների, խորհողության, նախանձախնդրության, իմացության, խնդության տվյալներով առաջնորդում են ժողովրդին, կյանքին տալիս են իրենց մեկնաբանությունը: Նկարիչը ոչ թե ընդգծում կամ նկարում է այնպես, ինչպես որ է, այլ այնպես, ինչպես ինքը տեսնում, մեկնաբանում է եղածը: Հետևաբար, այս զուգյակ, կրկնակ դերերը ունի Հայ մամուլը: Ես կխորհիմ, որ ամենեն մեծ ուժն է դա հասարակական կյանքի կազմավորման ընթացքի մեջ. նախ՝ ժողովուրդը տեղյակ պահելով եղածին, երկրորդ՝ նաև ուղղություն տալով ժողովրդին այն հայեցողության համաձայն, ինչ որ մամուլի սպասավորներն իրենք կընեն: Ուստի ուզում եմ, որ դուք գիտնաք, թե ես մեծապես կարևորում եմ մեր մամուլը իր այս երկու հիմնական առաքելությունների դաշտում և կարծում եմ, որ նրանք մեր հայրենիքի, ազգի վերակերտման պրոցեսին մեջ ունեն շատ հիմնական նկարագիր ու աստիճան:

Երկրորդ՝ ես ցանկանում եմ, որ այսօր խոսենք մեր Եկեղեցու մասին: Այդ Եկեղեցու Հովվապետն եմ ես հիմա և ահավասիկ երկու և կես տարիներ անցան այն օրից, երբ, ինչպես սիրում եմ ասել, ծայրագույն, բայց ծանրագույն պարտավորության եմ կոչվել: Նախ ձեզ հետ զրուցելիս ուզում եմ մի հարցումով սկսել. ի՞նչ ենք հասկանում, երբ Եկեղեցի ենք ասում և, մասնավորաբար, Հայ Եկեղեցի, որովհետև ինչպես հասկանում ենք մենք մեզ իբրև Եկեղեցի, ըստ այնմ էլ մեզ արտահայտում ենք: Ինքնաճանաչումը, թե ես ո՞վ եմ՝ ծանիր զքեզը, անհրաժեշտ է, որ մենք կարենանք գիտնալ, թե Եկեղեցին ինչու այս բանը չի անում և մյուսն է անում, կամ մի բան լավ է անում, մյուսը չի անում: Այդ բոլորը կշռել կարողանալու, արժևորելու համար հարկ է ունենալ Եկեղեցու գաղափարը, այնքան հարազատ, որքան Եկեղեցին ինքն է: Այսպես. եթե հարցնեք ժողովրդին, ժողովրդի մի մասը, ոմանք պիտի ասեն, թե Եկեղեցին բարեպաշտական արարողությունների, ձևակերպական շարժումների մի ավանդույթ է: Գնալ, մոմ վառել, մկրտություն կատարել տալ, մի խոսքով, կատարել բաներ, որոնք ընկալված ավանդույթներ են մեր Եկեղեցու մեջ: Ոմանց համար Եկեղեցին պատմության ժառանգություն է, փառավոր ժառանգություն, ոմանց համար՝ ազգային մեր ինքնության արտահայտությունը: Տակավին պիտի ասեմ, Եկեղեցին ուրիշների համար մշակույթի օջախ է, ոմանց համար մասնավորապես, ովքեր Եկեղեցին իրենց կյանքում չեն ապրել հատկապես այն իրողության պատճառով, որ Եկեղեցին չի ունեցել ազատ կյանք՝ ինքն իրեն արտահայտելու 70 տարիների ընթացքում, խորհրդային իշխանության ժամանակ: Այդ բոլորը թողել են այն տպավորությունը, թե Եկեղեցին պատկանում է մեր պատմությանը: Այսպես, օրինակ, Եկեղեցին խորհրդային շրջանին անցավ երկու հիմնական հանգրվաններ: Առաջին՝ հալածանք, փակում եկեղեցիների, փակում Հոգևոր Դպրանոցի, եկեղեցիների վերածում հանրային ծառայությունների համար եղող շենքերի՝ ինչպես թանգարան,

երաժշտական կենտրոն կամ թատրոն, նույնիսկ, աչքերովս եմ տեսել, Հարդանոց և այլն: Հալածել հոգևորականներին և արմատախիլ անել հանրային կյանքում կրոնքի դերը և ներկայությունը, որովհետև կրոնքը չինծու բան էր համայնավար, մարքսիստական մտածողության համար: Դա խանգարում էր այն ընթացքը, որ մարդկության վերակերտումի առաջադրությամբ սկսել էր համայնավարությունը և, ուրեմն, պետք էր, որ կրոնք ըսվածը, մեր պարագային՝ Հայոց Եկեղեցին, Ռուսաստանի պարագային՝ Ռուսաց Եկեղեցին, ժողովրդի առօրյա, ապրված կյանքի միջից դուրս հանվեր:

Համաշխարհային երկրորդ պատերազմը եկավ և այն ժամանակ մեծ դժվարությունների առջև գտնվեց Սովետական Միությունը: Որոշ փոփոխություն առաջ եկավ Եկեղեցու նկատմամբ և թույլատրվեցին որոշ եկեղեցիներ իբրև շենք գործածելու պաշտամունքի համար, բայց ոչ իբրև գործունություն՝ հանրության հասարակական կյանքին մեջ: Այս պատճառով մեր ժողովրդի մեջ շատ բնական երևույթ է ընկալվում եղած վերաբերմունքը հանդեպ Հայոց Եկեղեցին: 70 տարին երբ այսպես երկու հանգրվաններով անցավ, Եկեղեցին մնաց տեսակ մը պատմությունեից ժառանգված մի գեղեցիկ ավանդություն, բայց մարդկային կյանքի հետ կապ չունեցող: Մեր հայրերը հավատացել են, մեր հայրերը արել են, ինչ կարող էին, այսօր, սակայն, մենք ապրում ենք գիտական նոր դարու մեջ, ի՞նչ կարող ենք ունենալ այդ հավատքից: Բայց ես հիմա, իբրև այս երկրորդ կետի երկրորդ բաժինը, ասելու եմ. ինձ համար, որևէ մեկ հոգևորականի համար և որևէ մեկ հավատացյալի համար Եկեղեցին միասնական աղոթքի, Աստծու հետ հաղորդակցության ընթացքն է, Քրիստոսի տված Ավետարանի տարածումը մեր ժողովրդի մեջ: Եվ երկրորդ՝ այդ ճշմարտությունը ժողովրդին հասցնել քարոզչության միջոցով, ոչ թե միայն բերանացի քարոզությամբ, այլ նաև գրավոր, գրական աշխատանքով: Երրորդ՝ Եկեղեցին ծառայություն է: Եկեղեցին աղոթք է, հաղորդություն մարդ-Աստված, այսպես ուղղահայաց քարոզություն է Եկեղեցի-հոգևորական-ժողովուրդ և ծառայություն է մարդկանց՝ հանուն Աստծու: Այդ ծառայությունը ունի իր մեջ ընկերային տարածք: Օրինակի համար, աղքատին, հիվանդին, որբին, հաշմանդամին, տկարին մատուցված ծառայությունը քրիստոնեական հավատքի բնական արտահայտությունն է: Հիսուս բժշկեց, Հիսուս օգնեց, Հիսուս միայն չքարոզեց վերացական, փիլիսոփայական մի ճշմարտություն: Վերջինը՝ Եկեղեցու այս բուն սահմանումի մեջ: Մեր Եկեղեցին մեր ազգային միության շաղախն է: Կարող ենք գրական տարբեր հոսանքների պատկանել, կարող ենք քաղաքական տարբեր ըմբռնումներ ունենալ, սա բնական է, մարդկային է, բայց մեր Եկեղեցին ողջ ժողովուրդը համազանգոզ մի հավաքական այն ներգործությունն է, որի մեջ ժողովուրդը ինքն իրեն զգում է մի: Դա է մեր Եկեղեցու միության խորհրդանիշը և նաև ազդեցությունը մեր ժողովրդի վրա:

Հիմա, այս բոլոր ներածականեն ետքը, ես կուզեի ձեզ ծանոթացնել իմ խոսքի երկրորդ բաժնին, եթե դուք հարցեր ուղղեք ինձ իմ այս բոլոր ասածների վերաբերյալ: Ներկայումս մեր Եկեղեցին ի՞նչ գործունեության մեջ է: Այս երկու և կես տարիների ընթացքում ես բացառաբար տեսա, որ

մեր եկեղեցու առաջնահերթ գործը նոր սպասավորների պատրաստությունն է: Հիսուս՝ Աստվածորդին, գործելու համար մարդիկ ընտրեց՝ տասներկու առաքյալներին: Եկեղեցին շենքը չէ, աղյուսը չէ, մոմը չէ, ջահը չէ: Եկեղեցին հոգևորականների ծավալած գործունեությունն է իրրև շարժում: Մեկ խոսքով՝ մարդու, հոգևորականի սպասավորությունը ժողովրդին: Բայց ո՞ւր է այդ մարդը, ինչպե՞ս կպատրաստվի: Այսօր բժիշկ լինելու համար բժշկական համալսարան կա, փաստաբան լինելու համար իրավագիտական բարձրագույն ուսման ընթացք, ճարտարապետ լինելու համար բոլորդ ինձանից լավ գիտեք, թե ինչ կա: Մեզ համար առաջին գործունեության դաշտը եղավ և տակավին պետք է լինի երկար ժամանակ հոգևորական նոր սերնդի պատրաստությունը: Դրա համար ես ցանկանում եմ ձեզ ասել, որ անցնող երկու տարիների ընթացքում ուսանողության թիվը, փառք Աստուծո, բարձրացավ հիսունից մինչև 110-ի: Այս տարի այստեղ՝ Հոգևոր Ճեմարանում ունենք 110 ուսանողներ: Երկրորդ, ունենք ուրիշ երկու փոքր դպրանոցներ. մեկը Սևանում՝ 60 աշակերտներով, մյուսը Գյումրիում՝ 45 աշակերտներով, ովքեր այնտեղ իրենց ուսումը ստանալուց հետո, կգան և իրենց ուսումը կավարտեն Մայր Հոգևոր Ճեմարանում՝ Գևորգյան Ճեմարանում: Մյուս ուրախությունս այն է, որ մեր պատմական օջախը՝ Գևորգյան Ճեմարանը, 80 տարիների փակված լինելուց հետո, այսօր կրկին, փառք Աստուծո, վերաբացեց իր դռները հայ նոր հոգևորական սերնդի պատրաստության գործի համար և որքան լավ կլիներ, երբ մի անգամ այցելեիք ու տեսնեիք նորաբաց շենքը: Այդ օրը իմ կյանքի գերագույն երջանիկ օրերից մեկը եղավ, երբ մեր Հանրապետության նախագահի, վարչապետի, Արցախի նորընտիր նախագահի, Սահմանադրական Դատարանի նախագահի, ինչպես նաև մյուս նախարարների ներկայությամբ ես հարց էի տալիս հրապարակավ, թե արդյոք այս շենքի մեջ որտե՞ղ են նստել և իրենց պատանեկան ուսումը առել Կոմիտասը, Ավետիս Ահարոնյանը, Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսը: Այսպիսի մի շարք՝ Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Հակոբ Մանանդյան և տակավին այնպիսի դեմքեր, Լևոն Շանթ, Շարա Տալյան, որոնց ես ճանաչել եմ: Այս շենքի կամարների տակից ինչպիսի մարդիկ են դուրս եկել և մեր պատմության մեջ որքան էական, որոշադրիչ կնիք են թողել: Առանց նրանց մեր արդի պատմությունը աղքատ .կլիներ: Հետևաբար, այս հոգևոր դպրանոցը պետք էր ավելի ևս զարգացնել ոչ թե աշակերտների թվի տեսակետից, այլ նաև ուսման որակային արժեքի բարձրացումով: Ինչպե՞ս ենք ավանդում Աստվածաշունչը, աստվածաբանությունը, քարոզխոսությունը, բարոյագիտական աստվածաբանությունը, հայագիտությունը, Հայ եկեղեցու հայրերի ավանդությունը, ծեսը, մեր եկեղեցու կանոնական կարգը: Այս առումով հիմնական պատասխանատվությունների առջև է գտնվում այժմ Մայր Աթոռը և, իսկապես, լավ կլինի, որ մեր մամուլը պետք եղած կերպով արձագանք տա այն աշխատանքներին, որոնք կատարվում են մեր Հոգևոր Ճեմարանում:

Երկրորդ. Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոն: Երանի իսկապես առիթ ունենանք գնալու և տեսնելու նրանց մեղվաջան աշխատանքը: 24 աշխատակիցներ այժմ լծվել են այն գործին, որ կատարվում է

մեր ժողովրդի և մանուկների դաստիարակության համար: Ցոթը դասագիրք է պատրաստվել և քարոզխոսության, ժողովրդի հոգևոր դաստիարակության համար փոքրիկ գրքույկներ են լույս տեսել: Տպվել է և ձեզանից յուրաքանչյուրին այսօր ես ուրախությամբ կնվիրեմ Օրմանյան Պատրիարքի «Համապատում»-ը: Երևակայեցեք, Աստվածաշունչ Մատյանը, այդ հսկա հատորը տաք որևէ մեկի ձեռքը, ինչպե՞ս պետք է հասկանա: Աստվածաշունչը բացատրող գիրք եթե չլինի, Աստվածաշնչից ամեն մարդ իր սեփական գաղափարները կքաղի, իրեն դուր եկածները, որոնք հաճախ թյուր են լինում, որովհետև Աստվածաշնչից առաջ, երբ տակավին չկար Ավետարանը, կար Եկեղեցին: Այսինքն՝ Եկեղեցու միջից ծնվեց Ավետարանը: Եվ ո՞վ պետք է մեկնաբանի ժողովրդին այն: Տեսեք, իմ այս գրադարանում գոնե 12 մեծ հատորներ կան, ամեն մեկը «Համապատում»-ից ավելի մեծ, որոնք միայն Աստվածաշունչ Մատյանի գրքերի մեկնաբանությունն են: Արդ, եթե ես այսօր, 45 տարվա հոգևորական կյանքիս մեջ, Աստվածաշունչ կարդալուց հետո, պետք ունեմ այդ գրքերի՝ հասկանալու համար որոշ մասեր, որոնք գրվել են սրանից հազարավոր տարիներ առաջ, ինչպե՞ս պարզ հավատացյալը պիտի կարողանա հասկանալ, եթե նրան առաջնորդություն չտան: Հենց դրա համար են այսօր ծավալվում աղանդավորական շարժումներ: Ինչո՞ւ: Վերցնում են Աստվածաշունչը, կարդում են և ամեն մեկը ինչպես կարողանում, մեկնաբանում է, ապա դրանից մի կրոն է դուրս բերում: Բայց այդպես չէ Աստվածաշունչը: Այն Եկեղեցուց է ծնվել: Առաջին Ավետարանը Հիսուսի հարությունից շատ տարիներ հետո է գրվել՝ Մարկոսի Ավետարանը: Այդ տարիներին, երբ չկար գիրը, ճշմարտությունը ո՞ւր էր: Եկեղեցու ապրված կյանքի մեջ: Երբ տեսան, շեղումներ են լինում, այն ժամանակ Առաքյալները մտածեցին գրի առնել Ավետարանը, որպեսզի մարդիկ իրենց ուզածով չմեկնաբանեն Քրիստոսի բերած կրոնը: Դրա համար գրի առնվեցին ոչ թե բոլոր ասածները, այլ այն, ինչ որ հիշողությամբ առաքյալները պատկերացնում էին կամ վերապատկերացնում էին իրենց մտածողության մեջ:

Քրիստոնեական դաստիարակության մարզին մեջ ունենք, դուք թերևս հետևում եք, «Խորան Լուսոյ», «Սիրեցեք զմիմեանս» հաղորդաշարերը: Այդ բոլորը պատրաստվում են Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնում:

Երրորդ բաժինը ընկերային ծառայությունն է, որի մասին շատ սխալ պատկերացում կա մեր ժողովրդի մեջ: Ի՞նչ է անում մեր Եկեղեցին ընկերային ծառայության մարզում: Բնականորեն, մասնավորաբար երկրաշարժից հետո, Էջմիածինը դարձավ ընկերային ծառայության ամենից բեղուն գործունեության կենտրոններից մեկը: Ես այդ թվականներին եղել եմ այստեղ, դրանից հետո էլ եկել եմ, երբ Կիլիկիո Կաթողիկոս էի: Տեսնում էի, թե ինչպես օտար Եկեղեցիները և հայ ազգային մեր կազմակերպությունները, Էջմիածնի միջոցով, ծառայություններ են մատուցում: Դա անմիջական օգնություն է: Հիմա իմ ըմբռնումը ընկերային ծառայության վերաբերյալ ուրիշ է: Որևէ մեկը ձեզանից թերևս տեղյակ չէ, որ այստեղ հաստատել ենք գործի հայթայթման գրասենյակ: Էջմիածնի մեր Մայրավանքում գրասենյակ ունենք պաշտոնյայով, որ երբ որևէ մեկը կարիք

ունենա նյութական կամ այլ ընկերային կյանքի մեջ. իրեն փոխանակ 20, 30, 50 դոլլար տալու, գործ ենք հայթայթում հետևյալ ձևով. տրվում է, ըստ գործի, համապատասխան գումար՝ ընտանեկան փոքրիկ գործերի համար, որպեսզի նրանք գնան և իրենց տրված գումարով գործ սկսեն և անհրաժեշտ գումարը իրենց քրտինքով շահեն, կարիքների առաջն առնեն: Մենք մեր ժողովրդին պետք է դարձնենք ինքնագործ, ինքնաբավ և մեր անկախության հիմքը պետք է լինի ոչ միայն մեր գաղափարախոսությունը, այլ նաև մեր կյանքը, որ, այլևս մեր սեփական ուժերին վստահած, մեր հողից և մեր միջոցներով, տնտեսական զարգացման ընթացքով կարողանանք այս ժողովրդի անկախությունը հիմնավորել, ամրացնել, այլ ոչ թե միայն գաղափարական կամ գեղեցիկ զգացումների ծիրի մեջ պահել:

Մայր Աթոռը նաև գործում է իր թեմերով: Արարատյան Հայրապետական թեմում հսկայական գործ է ծավալվում, քանի՜ հազարավոր որբեր ստացել են օգնություն: Նրանք աղետի գոտուց են, զոհված քաջամարտիկների երեխաներ: Ծանկերը երբ տեսնեք, ծանոթանաք թեմի կատարած հսկայական աշխատանքին, կհամոզվեք: Այսպես են գործում բոլոր թեմերում: Քիչ առաջ Սյունյաց թեմի առաջնորդն էր այստեղ: Ջրատար կառուցեց, գյուղերը ջուր տարավ: Այս բոլորը թեմը արեց, եկեղեցին արեց՝ իբրև ժողովրդի ընկերային ծառայություն: Տակավին ուրիշ թեմերում կան զանազան աշխատանքներ: Նաև արտասահմանյան մեր թեմերը մեզ մեծ օժանդակություն են բերում:

Այս տարի ես ամենաբախտավոր ամիսը նկատեցի սեպտեմբերը, երբ մեկ ամսվա ընթացքում չորս եկեղեցիներ օծեցի: Հայոց պատմության մեջ ե՞րբ է այսպիսի միջադեպ եղել. երեքը՝ Հարավային Ռուսաստանում՝ Կիսլովոդսկ, Կրասնոդար, Կուրգանինսկ քաղաքներում և տակավին ուրիշներն էլ են կառուցվում, մեկը, ամենագողտրիկը, Մոմիկ վարդապետի եկեղեցին՝ Արենիի եկեղեցին, Եղեգնաձորում: Բացվեցին նաև երկու դպրոցներ: Ամեն մի դպրոցը մեր մի թեմի նվերն էր Հայաստանի ժողովրդին. մեկը՝ Վազգեն Ա Կաթողիկոսի անվան դպրոցը Գյումրիում, որ կառուցվեց Ամերիկայի Արևելյան թեմի միջոցներով, մյուսը՝ Ստեփանավանում՝ Ամերիկայի Արևմտյան թեմի աջակցությամբ: Շատերը կարծում են, թե օգնությունը գալիս է այս կամ այն օտար կազմակերպությունից: Բա մեր սեփական եկեղեցու կատարած գործերը ինչպե՞ս պետք է արտահայտվեն, ծանոթ դառնան մեր ժողովրդին: Հայ Օգնության Ֆոնդը /ՀՕՖ/ հսկայական գործունեություն է ծավալում, բայց այդ մասին պետք եղած տեղեկատվությունը չկա: Սա ևս եկեղեցու գործն է: Եկեղեցին շատ ավելի գործոն է, քան երևում է ընդհանրապես:

Մեր եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մեծ դեր ունի նաև Հայաստան-Սփյուռք շրջագծում: Մայր Աթոռը, Սուրբ Էջմիածինը, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը չէ սահմանափակված միայն Հայաստանով և Արցախով, կամ նախկին Սովետական Միությունից դուրս եկած երկրների մեջ ապրող հայերով, լինի դա Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայի մեջ կամ ուրիշ երկրներում: Մենք արտասահմանում ունենք բազմաթիվ թեմեր: Այս հարաբերությունը ամենից կարևոր ուղիներից մեկն է՝ Հայաստանի և Սփյուռքի միջև սերտացնելու այն կապը, որ այլևս

անջրպետված, երկու առանձին միավորներ չնկատվեն սրանք, այլ մեկ ազգի բաղկացուցիչ մասնիկ: Ես հաճախ ասում եմ, որ արտասահմանի հայերի բաժինը մեր Հայաստանի վերակերտումի առաքելության մեջ, նպաստ բառով չպետք է արտահայտվի, օգնություն բառով չպետք է արտահայտվի, այլ՝ մասնակցություն բառով: Եվ այդ է մեր հիմնական գաղափարը: Ես ուզում եմ ձեզ ասել, որ այդ մարզում Էջմիածինը մեծ գործ է կատարում գլխավորաբար այն հովվապետական այցելությունների ընթացքում, որ մենք տալիս ենք և որոնց վերջինը եղավ սրանից երկու շաբաթ առաջ՝ Անգլիայում: Երբ գնում, հաղորդվում ենք օտար ժողովուրդների, ինչպես նաև տեղի հայերի հետ, թարգմանում ենք նրանց մեր ժողովրդի իրական կյանքը, Հայ Եկեղեցու կարիքները.. նրանք հասկանում են, առավել կապվում մայր հողին և Մայր Աթոռին:

Այս արտաքին հարաբերությունների շարքում ես կարծում եմ, որ մեր Եկեղեցին շատ մեծ դեր ունի կատարելիք նաև միջազգային եկեղեցական հարաբերությանց մեջ, ինչ որ կոչում ենք այս դարում էկումենական շարժում: Դուք հետևում եք աշխարհի մամուլին: Այսօր հաղորդակցության դարն է այլևս: Կղզիացումի ժամանակը անցավ: Ուզենք անգամ, չենք կարող կղզիանալ, մեկուսանալ: Անպայման հաղորդակցությունը պիտի լինի և կա: Ինչպե՞ս այս հաղորդակցությունը օտար եկեղեցիների հետ կազմակերպել, որ նրանց դրական երևույթներից մենք կարողանանք օգտվել և մեր եկեղեցին հարազատ կերպով ճանաչել տալ, այլ ոչ թե սխալ պատկերացումներով, ինչ որ արել են ժամանակին օտար միսիոնարները: Եկել են Հայաստան, իրենց ուզածի պես ներկայացրել են մեր եկեղեցին: Մենք երբ մասնակցում ենք այդ ժողովներին, մենք ենք զմեզ ներկայացնում, այլ ոչ թե օտարները: Սա շատ կարևոր հարց է, որովհետև նստել այստեղ և կարծել, թե մարդիկ մեզ ճանաչում են, դա ինքնախաբեություն է: Ես կյանքիս մեծ մասն ապրել եմ արտասահմանում և գիտեմ, թե օտարների առջև մենք՝ Հայերս, տակավին պետք եղած ճանաչումը չունենք: Այսինքն՝ չենք պատկերանում այնքան և այնպես, ինչքան և ինչպես եղել ենք և ենք այսօր: Ես առաջին ցնցումը, որ կրեցի կյանքումս այս մարզում Օքսֆորդ ուսանելու գնալուց հետո էր: Առաջին օրը, երբ անգլիացի ուսանողների հետ քայլում էի դեպի ճաշարան, ինձ մի անգլիացի ուսանող իրեն ներկայացրեց, ես ևս ներկայացա, ասելով, թե Հայաստանցի եմ: Որտե՞ղ է Հայաստանը, ասաց:

Այս եկեղեցին Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու մաս է կազմում: Մենք պարտավոր ենք այլ եկեղեցիներին ներկայացնել մեզ այնպես, ինչպես ենք և նաև հաղորդակցություն ունենանք այդ եկեղեցիների բոլոր դրական երևույթների հետ, որոնք իսկապես մեզ համար կարող են դառնալ մարտահրավեր և դրական գրգռիչ, մղիչ ուժ նոր գործերի: Այս տեսակետից, փակելով խոսքս, ասում եմ հետևյալը. Հայոց եկեղեցին այսօր մի վերանորոգության հոսանքի միջից է անցնում: Ես խոնարհվում եմ Աստծու առջև: Այս վերջին շրջանում միայն 15 նոր արեղաներ ձեռնադրվեցին՝ կուսակրոն հոգևորականներ, շուրջ 25-30 քահանաներ: Այս երիտասարդական նոր շունչը պետք է ծավալվի մեր եկեղեցում, որպեսզի ժողովուրդը կարողանա իր հոգևոր և բարոյական ինքնության ու արժանապատվության

արժեքների գիտակցությունը ունենալ: Այսօր մեր ժողովրդի զավակների և հատկապես երիտասարդության մասին է իմ մտահոգությունը: Հարցրեք որևէ մի երիտասարդի, թե ո՞վ է եղիշե պատմիչը, ի՞նչ պիտի ասի: Շատերը չեն իմանա: Մենք կտրվում ենք մեր ինքնությունը կառուցող այն հիմնարժեքներից, որոնք դարերի ընթացքում մեզ պահել են: Դուք շատ եք լսել, ես սա ուրիշ անգամներ ևս ասել եմ, արտասանում ենք. «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա»: Բայց Քուչակ կարդացողն ո՞վ է, նրա արժեքների հետ ո՞վ է հաղորդակցվում: Նարեկացու գովքն ենք հյուսում, սակայն Նարեկացի կարդո՞ւմ ենք:

Մի խոսքով, Եկեղեցին այսօր կոչված է իր ժողովրդի մեջ հոգևոր և բարոյական առողջություն, վերակենդանություն, վերստին հարազատացում սերմանելու՝ մեր ինքնության հետ միասին: Այս է մեր Եկեղեցու դերը այս օրերին:

Եթե ունեք հարցադրումներ մեր Եկեղեցու գործունեության, ժողովրդի կարիքների և Եկեղեցու մասին, նաև ձեր ունեցած տպավորության անբավարարության, խնդրեմ, ազատորեն արտահայտվեք, ես ամենայն սիրով կկանամ պատասխանել:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է առաջադրված հարցերին

ՀԱՐՑ. – Վեհափառ Տեր, արդյոք Եկեղեցին չպե՞տք է առավել ակտիվորեն մասնակցի նաև քաղաքական կյանքին, որովհետև Դուք ընտրվեցիք մեկ ազգ, մեկ Եկեղեցի, մեկ պետություն կարգախոսով: Բոլորը խոսում են Արցախի փոխզիջումների մասին: Դուք ընդունո՞ւմ եք դեսպանների, արտասահմանից եկած բարձր պատվիրակությունների ներկայացուցիչներին, գուցե նրանց կամ մեր պետության բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկեք այդ հարցը: Պետք չէ՞ արդյոք, որ Եկեղեցին հրապարակավ փորձի այդ փոխզիջումը կամ երկխոսությունը գտնել որպես մեկ ազգ, մեկ Եկեղեցի, մեկ պետություն, այսինքն՝ այդ քաղաքականացումը լավ իմաստով արդյոք անհրաժեշտ չէ՞, թե հակառակը կարող է լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ. – *Եկեղեցին ինքը քաղաքական կազմակերպությունների հատուկ գործունեության մեջ չի կարող մտնել, քանի որ Եկեղեցին ունի իր սեփական առաքելությունը, որ գլխավորապես հոգևոր և բարոյական դաստիարակության հետ է կապված: Բայց Եկեղեցին քարոզիչն է, ջատագովը և պաշտպանը այն սկզբունքների, որոնք քաղաքականության հետ են առնչվում, սակայն վեր են քաղաքականությունից: Այսպես, օրինակ, Արցախյան հարցում ազատությունը, Արցախի մեր ժողովրդի կամքի հարգումը, սրանք մեր Եկեղեցու հիմնական տեսակետներն են: Մենք այս մարզում, բնականորեն, մեր տեսակետները հայտնում ենք հաճախ այն բոլոր այցելուներին, ովքեր գալիս են այստեղ: Ես հաճախ եմ ասում ինձ մոտ եկող բարձրաստիճան այրերին, պետական գործիչներին կամ, ինչպես դուք ասացիք, դեսպաններին, եթե դուք հավատում եք մարդկային իրավունքներին, ընդունել եք ազգային ինքնորոշման հատուկ սկզբունքներ,*

ինչպե՞ս չեք ուզում հարգված տեսնել այդ սկզբունքները Արցախում: Մեր գլխավոր տեսակետն այս է. մենք ջատագովն ենք մեր ժողովրդի ազատ կամքի արտահայտության և ազատ կյանքի իրագործման իր սեփական հողի վրա, որ Արցախի հայերինն է: Այս է մեր քաղաքականությունը: Սրանից դուրս այլևս քաղաքական, տեխնիկական աշխատանքների մեջ Եկեղեցին չի կարող մտնել, որովհետև դա քաղաքական կուսակցությունների, պետական կառույցների հետ կապված գործ է:

ՀԱՐՑ. - *Ի՞նչ կասեք օրավուր աճող աղանդների մասին:*

ՊԱՏԱՍԽԱՆ. - *Մենք բոլոր երևույթները ուզում ենք հստակ ձևով պատկերացնել: Առաջին. այսօր, երբ մենք խոսում ենք Հայ Կաթողիկե և Ավետարանական Եկեղեցիների մասին, դա ուրիշ բան է, քան երբ խոսում ենք այնպիսի շարժումների մասին, ինչպիսիք են Եհովայի վկաները, հոգեգալստականները կամ մյուսները: Դրանք ուրիշ կատեգորիա են: Գոնե ես անձամբ և մեր Մայր Աթոռը այդպիսի շարժումների նկատմամբ ունենք մեր կեցվածքը: Այսպես. երբ նրանք գալիս են և խոսում են, ասում եմ. դուք ինչո՞ւ եք եկել Հայաստան: Ահա թե ինձ ինչ պատասխանեցին մի անգամ: Մեկն ասաց, թե եկել է Քրիստոսը քարոզելու, շտաբթապահ էր: Ես էլ հարցրի, թե ինչո՞ւ ես Հայաստան եկել՝ Քրիստոս քարոզելու, ուր Քրիստոս քարոզվել է հենց առաքյալների կողմից, և այսօր մեր երկիրը քրիստոնյա երկիր է: Ես նրա համար կարդացի Մատթեոսի Ավետարանի 28-րդ գլխի 20-րդ համարը, ուր ասվում է. «Գնացեք աշակերտեցեք զամենայն հեթանոսս»: Դուք Հայաստան գալով մեզ հեթանո՞ս եք նկատում: Դուք Քրիստոսի կամքին դեմ եք գործում, որովհետև դու գալիս ես, Քրիստոնյա մարդուն Քրիստոս ես քարոզում, երբ կան շատ ուրիշ ազգեր, որոնք քրիստոնյա չեն: Ինչո՞ւ չես գնում և նրանց չես քարոզում: Դա Քրիստոսի մտածումի մեջ առաքելություն, միսիոն չէ, այլ՝ մարդորսություն, պարզ մարդորսություն: Ես ասում եմ հետևյալը. այս ժողովուրդը իր քրիստոնեական հավատքի համար այսքան դարեր տոկացել է, ստեղծագործաբար ապրել, փոխարեն գալու, ձեր ձեռքը մեր ձեռքի մեջ գնելու, գնում եք մեր ձեռքից, կամքից անկախ, մեզ դեմ կամ զուգահեռ, ոչ թե համընթաց, կառույցներ եք ստեղծում, ժողովրդին օգնություն տալիս: Սա քրիստոնեություն չէ: Քրիստոնեություն քարոզել, նշանակում է գնալ, այն մարդուն քարոզել, ով քրիստոնյա չէ:*

Իսկ մենք այստեղ հսկայական գործ ենք կատարում: 103 հազար Նոր Կտակարան ենք տարածել մեր ժողովրդին՝ Սուրբ Գրոց ընկերության օժանդակությամբ, 15 հազար 500 հսկա Աստվածաշունչ՝ Նոր թարգմանությամբ: Նրանք գալիս են, դրամ ունեն, մի հին հրատարակության Աստվածաշունչ են վերահրատարակում, կարծում են, մեծ գործ են արել: Դա շատ չէ Քրիստոսի համար և ժողովրդի մեջ չփոթ է առաջացնում: Հետևաբար, մենք նրանց հետ չենք կարող գործակցել, բայց սիրով գործակցում ենք Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցիների հետ: Այլևս պետք է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին զորանա, որպեսզի դառնա կովան քրիստոնեական հավատքի, մեր Եկեղեցու, այլապես մեր մեջ

դարձյալ ճյուղավորումներ առաջ կգան, ավելորդ ու անհարկի բևեռացումներ առաջ կգան, որոնց կարիքը և բարիքը չեմ տեսնում ես այսօր:

ՀԱՐՑ. – Վեհափառ Տեր, խնդրում եմ մեզ համար ճշտեք, թե Հայ Ավետարանչական Եկեղեցին ի՞նչ դեր է խաղում Հայ Առաքելական Եկեղեցում, որովհետև այստեղ կան մի քանի մասնաճյուղեր, որոնցի գտնում են, թե այն Հայ Առաքելական Եկեղեցու քույր Եկեղեցին է, բայց միաժամանակ այդ ճյուղավորումները տանում են ազգային քաղաքականություն:

ՊԱՏԱՍԽԱՆ. – *Մենք նրանց հետ գործակցում ենք կրոնական դաստիարակության մեջ՝ ծավալելով մեր փորձառությունը: Նրանց ասում ենք, որ իրենք ևս գան ու մասնակցեն այս գործին: Նրանք մասնակցել են Սուրբ Գրքի տարածման, «Համապատասխանի» հրատարակության կամ այլ մարզերում, բայց մենք նրանց հետ չենք կարող գործակցել, եթե փորձեն մեր ժողովրդի միջից ազգային պատկանելության գաղափարը սուվերի տակ առնել, որովհետև այդ ազգային ինքնությունը մեր քրիստոնեական հավատքով է շաղախված: Եթե երբեք մեր ժողովրդին հեռացնեն իր ազգային այդ պատկանելիության սկզբունքից և ուղղ, մենք չենք կարող նրանց հետ գործակցել բնականորեն: Մեր Եկեղեցին ազգային է, այսինքն՝ քրիստոնեական հավատքը մեր ազգի կյանքի մեջ թարգմանող Եկեղեցին է: Հետևաբար, մեր ազգի դարավոր ինքնության մեջ ունեցել ենք մեր որոշադրիչ դերը: Հիմա կանգնեմ ու ասեմ, թե հայերեն լեզուն կարևոր չէ և կամ ազգային ըմբռնումը կարևոր չէ, հայրենիքը կարևոր չէ, կարևորը հոգին է, բա հոգին որտե՞ղ է ապրում: Հոգին մարդկանց մեջ է ապրում, մարդիկ ազգերով են արտահայտվում:*

Ես նոր եմ վերադարձել Անգլիայից: Անգլիո Եկեղեցու պետը պաշտոնականորեն թագուհին է: Ես գնացի, տեսա նրան, իր հետ պաշտոնական հանդիպում ունեցա: Շատ մոտիկից հետաքրքրվում է Եկեղեցու դերով՝ մասնավորապես 20-րդ դարում: Հետո գնացի իրենց Եկեղեցին: Տեսա, օրինակի համար, իրենց պետական-քաղաքական մեծ դեմքերին, թաղվել են եկեղեցիներում: Ազգային Եկեղեցին է ապրում: Ամերիկյան Եկեղեցիները վերցնենք: Ես ապրել եմ Ամերիկայում: Նրանք այնքան ամերիկացի են, որ իրենք իրենց ամերիկացիությունը հպարտությամբ ու նախանձախնդրորեն են ապրում:

ՀԱՐՑ. – Վեհափառ Տեր, ի՞նչ եք կարծում, կարո՞ղ է այսօր մեր Եկեղեցու զորակցմանը նպաստել քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու հանգամանքը: Ինչպե՞ս եք դա տեսնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. – *Այսինքն՝ մեր պետությունը պետական կրո՞ն հռչակի: Դա կարող է ստեղծել որոշ բարդություններ մեր պետության համար՝ միջազգային նորմերին, միջազգային ընդունված սկզբունքներին հակասելու տեսակետից: Ինչո՞ւ: Որովհետև երբ պետական կրոն ես հռչակում, այդ պատճառով դու շնորհակալ աղատությունը կաշկանդում ես: Հետևաբար,*

կրոնական ազատությունը, խղճի ազատությունը համամարդկային կերպով ընդունված սկզբունք է, մեր պետության Սահմանադրության մեջ նաև ճանաչված սկզբունք: Այդ պատճառով պետական կրոն բառը մենք չենք կարող գործածել, որովհետև դա կրոնական խղճի ազատության դեմ կարող է նկատվել: Բայց ես ճիշտ եմ գտնում, որ մեր պետությունը Ազգային, ոչ թե պետական, Ազգային Եկեղեցի է ճանաչում Հայոց Առաքելական Եկեղեցին: Դա շատ բնական երևույթ է, որովհետև մեր ազգի եկեղեցին ո՞րն է: Վերցրեք ողջ պատմությունը, մշակույթը: Մեր եկեղեցին, ազգային, ազգին պատկանող եկեղեցին Առաքելական է: Սա պատմական իրողություն է, որ չի հակասում կրոնական ազատությանը:

ՀԱՐՑ. – Վեհափառ Տեր, վերջին շրջանում խոսում են այն մասին, թե սառեցվում են Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները: Ի՞նչ կասեք այդ մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. – *Ես բացարձակապես, եթե նման փորձ անգամ կա, դեմ եմ դրան, այսինքն՝ սառեցման դեմ եմ: Չի կարող լինել սառեցում: Նույնիսկ երբ երկաթյա վարագույրը կար, հարաբերությունը բոլորովին չէր տուժում: Այսօր երբ վարագույրը չկա, ինչպե՞ս կարող ենք սառեցնել այս հարաբերությունները: Դա ինձ համար անըմբռնելի երևույթ է, որովհետև Հայության սահմանումը Հայաստանաբնակ Հայությամբ չի շրջագծվում, այլ ամբողջ Հայության ներառումով: Քանի որ ես Սփյուռքի զավակ եղած եմ, գիտեմ, որ Սփյուռքը չնչում է Հայրենիքի գաղափարով: Երևակայեք, դուք Հայաստանում եք ծնվել, բայց այն դյուղը, ուր ես եմ ծնվել, կամ ինձ նման հարյուր հազարավորները Սփյուռքում, օտար երկրի մեջ Հայաստանի հետ են կապված եղել: Կապված ենք եղել լեզվով, հավատքով, մշակույթով, արտասանել ենք այն, ինչ դուք այստեղ, երգել այն, ինչ դուք: Մի խոսքով, այդ կապը միշտ մնացել է: Այսօր, անկախության, ազատության այս պայմաններում շատ ավելի պետք է սերտացնենք Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունը: Գալով Ձեր հարցումի երկրորդ բաժնին, պիտի ասեմ, որ եկեղեցին շատ մեծ դեր ունի, որովհետև այն Սփյուռքում կառույցներ ունի, որոնք մեր Հայրենիքի սպասարկությանը մեջ ունեն իրենց դերակատարությունը: Դա իրագործվում և իրագործվելու է Մայր Աթոռի միջոցով: Ես ենթադրում եմ, որ ամենեն մեծ նպաստը կարող է Հայրենիքին Սփյուռքի մեր եկեղեցին բերել: Քիչ առաջ մի քանի տվյալներ ես փոխանցեցի ձեզ, բայց կարող եմ տասնյակներով օրինակներ բերել, թե ինչպես Մայր Աթոռի միջոցով Սփյուռքը մեծ օժանդակություն ունեցավ, նաև օտար եկեղեցիները դրական մեծ ներդրումներ կատարեցին: Օրինակ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով, բայց դրամը մենք հայթայթեցին, Ղարաբաղում հիվանդանոց բացեց: Գյումրիում միջեկեղեցական կազմակերպություններից առնված դրամով կարողացանք բնակարաններ կառուցել: Մեր ունեցած քարոզների մեջ, մեր խոսածների, օտար կազմակերպությունների հետ մեր ունեցած հարաբերություններում շատ մեծ դեր ենք ջանում կատարել: Որքան է հաջողվում, Աստված գիտի, բայց ոչ մի ժամանակ չենք թերանում այն*

մարզի մեջ, որ մենք մեր Հայաստանի ժողովրդին բերենք արտասահմանի և՛ Հայության, և՛ օտար Եկեղեցիների դրական մասնակցությունը՝ առանց նրանց կողմից Հայաստանի ճակատագիրը որոշելու կամ Հայաստանի ուղղությունը ճշտելու աստիճանի զորությամբ, կամ ինչպես ասում են, նրանց կողմից իրենց տվածի զորությամբ մեզ կառավարելու զգացումը: Դա երբեք չի եղել և չի լինի:

Զրույցից հետո

Հավարտ հարց ու պատասխանի, հյուրասիրության սեղանի շուրջ ծավալվեց ժտերմիկ խոսակցություն: Ամեն ոք ցանկանում էր առավել մոտ կանգնել Ամենայն Հայոց Հայրապետին, ստանալ պաշտոնական զրույցից դուրս իրեն հետաքրքրող առօրեական հարցերի պատասխանը, կամ տաջադրել այն հարցը, որ դեռ չէր հասցրել տալ: Ամենքին սիրով էր պատասխանում Նորին Սրբությունը, փորձում հայրական ջերմությամբ ոգևորել նրանց:

Վերջում Հայոց Հայրապետը, ի հիշատակ հանդիպման, ներկաներին նվիրեց Օրմանյան Պատրիարքի «Համապատում»-ը, որպեսզի այդ գրքի օգնությամբ երիտասարդ լրագրողները կարողանան ավելի լավ ընկալել Աստծո խոսքը, երկնառաք Վարդապետի պատվիրանները ու հորդորները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ